

ԿՈԴ
050.0179 Ն. 24.10.22

24 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 179-Ն

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2022 թվականի երրորդ եռամսյակ)

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,
ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 1%-ի չափով: Սահմանված դրույքաչափը ուժի մեջ է (պարտադիր է կատարման) 2023 թվականի մայիսի 1-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
2022թ. հոկտեմբերի 24
Երևան

Մարտին Գալստյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2022թ. երրորդ եռամսյակ)

2022 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 1%-ի չափով¹:

Հակացիկլիկ շեմի սահմանված դրույքաչափը ուժի մեջ է 2023 թվականի մայիսի 1-ից:

Կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուֆեր (ԿԲ)) վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է մակրո-ֆինանսական և վարկավորման շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. Վարկավորման շուկայում շարունակվել են 2022թ. տարեսկզբից առկա աճի միտումները²: Թե՛ ֆիզիկական, և թե՛ իրավաբանական անձանց վարկերը աճել են նաև նախորդ եռամսյակի համեմատությամբ: Այնուամենայնիվ, 2022թ. երրորդ եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է և կազմել շուրջ 67%³: Այս ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է վարկերի համեմատ ՀՆԱ առաջանցիկ աճով: Բազելյան կոմիտեի մեթոդաբանությամբ տվյալ ցուցանիշի համար հաշվարկված երկարաժամկետ տրենդից շեղումը (վարկեր/ՀՆԱ ճեղքվածք) ևս նվազել է և կազմել -6.7 տոկոսային կետ:

Ինչպես բազմիցս նշվել է նախորդ հիմնավորումներում, ԿԲ սահմանաչափի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելիս Կենտրոնական բանկը կարևորում է համակարգային ռիսկերի զարգացումների համընդհանուր վերլուծության արդյունքները և չի առաջնորդվում բացառապես Բազելյան կոմիտեի մեթոդաբանությամբ հաշվարկված վարկեր/ՀՆԱ ճեղքվածքի մեծությամբ:

¹ Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուֆեր (ԿԲ)): Կենտրոնական բանկը ԿԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթղթի դրույթներով:

² Հաստատուն փոխարժեքով հաշվարկված իրավաբանական անձանց վարկերի աճը տարեսկզբից կազմել է մոտ 6.3%

³ Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2022թ. երրորդ եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

2. Ֆինանսական ցիկլի ինդեքսը շարունակել է աճել ինչպես տարեկան կտրվածքով, այնպես էլ նախորդ եռամսյակի համեմատությամբ: Ֆինանսական ցիկլի աճին առավելապես նպաստել է հիպոտեկային վարկավորման բարձր աճի տեմպը, որը միաժամանակ ուղեկցվել է նաև անշարժ գույքի գների արագ աճով: Հաշվի առնելով, որ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով պարտքային ֆինանսավորման ծավալների և անշարժ գույքի գների աճերը համարվում են բնույթով միմյանց փոխլրացնող և փոխսնուցող՝ ԿԲ-ը գնահատում է, որ անշարժ գույքի շուկայում պահպանվում են գերտաքացման ռիսկեր:
3. Ներկայում բանկային համակարգը բնութագրվում է շահութաբերության և կապիտալի համարժեքության բարձր մակարդակով: Արդյունքում, բանկային համակարգի կողմից ԿՀԲ դրույքաչափի առաջարկվող բարձրացման պահանջներին համապատասխանության ծախքերը նվազագույն են, և բանկերի կապիտալիզացիայի ներկա բարձր մակարդակը ավելի քան բավարար է տնտեսության վարկավորման բնականոն տեմպերի պահպանման համար:
4. Ռուս-ուկրաինական շարունակվող հակամարտության և աճող աշխարհաքաղաքական անորոշությունների պայմաններում համակարգային (ցիկլային) ռիսկերի նյութականացման հավանականությունը շարունակում է մնալ բարձր՝ ինչպես ազդեցության չափի, այնպես էլ արագության առումով: Ընթացիկ պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է կապիտալի բուֆերների կուտակման միջոցով ՀՀ բանկային համակարգի կողմից ապագա հնարավոր շոկերին դիմակայելու ունակության բարձրացումը (resilience): Ամրապնդելով կորուստների կլանման ունակությունը՝ կապիտալի բուֆերները ընդլայնում են նաև ցիկլային ռիսկերի նյութականացման պարագայում բանկային համակարգի կողմից տնտեսության անխափան վարկավորման հնարավորությունները:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում բարձրացնել ԿՀԲ դրույքաչափը՝ սահմանելով այն 1%: ԿՀԲ դրույքաչափի ապագա փոփոխությունները (ինչպես բարձացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ) կաժանցվեն մակրոֆինանսական պայմանների, անորոշությունների և համակարգային ռիսկերի զարգացման հետագա ընթացքից: